

Սոյն տապանագիրը՝ զոր անձամբ քաղած եմ 1909ին՝ երբ Զմիւռնիա կը գտնուէի, հրատարակած է նախ Հմայեակ Վ. Դիմաքսեան, իւր «Շիրք մսկուք ի Միջերկրականե» երկին մէջ (Կ. Պոլիս 1878, էջ 329-330): Եւ ապա Հ. Յ. Քօսեան իւր «Հայք ի Զմիւռնիա և ի յրջակայս» աշխատութեան մէջ. (Վիէննա Հատոր Ա.):

ԻԵ.

ԳԷՈՐԳ ՊԱՏՐԻԱՐԲ

Յետոյ կաթողիկոս Էջմիածնի. թաղուած է Էջմիածնի Մայր Տաճարին բակը, ունենալով սա պարզ Արձանագրութիւնը.

Հանգիստ սրբաաննեայ մարմնոյ
Գէորգ Դ. կաթողիկոսի
Ամենայն Հայոց
Ծնեալ ի Յուլիսի 1813 ամի
եւ վախճանեալ ի 6 Դեկտեմբերի 1882 ամի:

ԻԶ.

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԲ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Թաղուած է Կ. Պոլսոյ Գում Գարուի Մայր եկեղեցիին աջակողմեան գաւիթը. ունի երկու մասէ գեղեցիկ շիրիմ, մին կանգուն, միւսը հորիզոնական: Առաջինին վրայ կը կարգացուի՝

Մահարձան
Տ. Տ. Ներսէս վարդապետի վարժապետեան
Բազմարդին Արքեպիսկոպոսի
Ազգասէր Պատրիարքին
Հայոց Թուրքիոյ
1837 — 1884

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի

Երկրորդ մասին վրայ՝

Աստ Հանգչի
Տ. Ներսէս Արքեպիսկոպոս վարժապետեան
Ծնեալ ի Խապիւղ կոստանդնուպօլսոյ
Յամին 1837 ի 28 Յունվարի
որ եղեալ